

Վ-28

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՑՈՒՆ ԱՆՍՏԵՄԻԱ
ՀԱՍԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԽՍՏՏՆՏՈՒՑ

Բնագրի իրավունքով

ՄԱՆՈՒԶԱՐՑԱՆ ԱՇՈՏ ԳԱԳԻԿԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՄՄՈՆԻՏԵՐԸ ՀԱՅՈՍՏԱՆԻ ՔԱՂԱՇԱԿԱՆ

ՊԱՏՈՒԹՅԱՆ ՍՆՋՐԱՊԱՐՑՈՒՐՆԵՐ /9-14-ԲԴ ԳԴ./

/Պատմա - վիմագրագիտական ուսումնասիրություն/

Անանագիտություն՝ Է.00.03 -

- Գնագիտություն

Պատմական գիտությունների թեկնածուի
գիտական առարկանի հայցման առհնախո-
սություն սեղմագիր

Ե Ր Ե Վ Ա Ն - 1 9 9 5

Աշխատանքը պատրաստվել է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության
ինստիտուտում

Գիտական ղեկավար՝

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գ. Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Պաշտոնական ընդդիմախոսներ.

Պատմական գիտությունների դոկտոր

Ռ. Ի. ՄԱՐԵՎՈՍՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու

Գ. Գ. ՄԱՐԳԱՅԱՆ

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի պետական համալսարանի
պատմության ֆակուլտետի հայոց պատմության ամբիոն

Պաշտպանությունը կկայանա 1996 թ.

ժամը՝

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտին տրված
զործող դոկտորի գիտական աստիճան շնորհող / 007 / Մասնագիտական
խորհրդում / հասցեն՝ ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստի-
տուտ, Չարենցի 15/:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հնագիտության
և ազգագրության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրը առաքված է 1995 թ.

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար

պատմական գիտությունների թեկնածու

Գ. Յ. ՎԱՐԳՈՒՅԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ԱՏԵՆԱՊՈՍՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱՆԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայ պատմագիտական գրականության մեջ առաջին անգամ փորձ է ար-
վում 9-14-րդ դարերի հայկական վիմագրերի հիման վրա լուսաբանել միջ-
նադարյան Հայաստանի քաղաքական պատմությունը: Զարգացած ավտոտարու-
թյան դարաշրջանը հայ ժողովրդի պատմության լավագույն ուսուցանանքով
բաժիններից է՝ հատարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակու-
թային տոմսերով: Դա, առաջին հերթին պայմանավորված է միջնադարյան
հարուստ մատենագրությամբ, հայագիտության դասականների անգնահատելի
ժառանգությամբ, ժամանակակից հետազոտողների լուրջ ուսումնասիրու-
թյուններով, որոնք համախ չեն խուսափել իրենց աշխատանքները համեմ-
արվելու վիմագրական անհրաժեշտ աստիճանի: Սակայն, եթե նշանց հետազոտու-
թյունների հենքն առավելագույն հանդիսացել է պատմագրական նյութը,
իսկ օժանդակը՝ վիմագրականը, ապա ներկա աշխատության մեջ փորձ է կո-
տարվել անել հակառակը, այսինքն՝ Զվագյալ երկրորդականը դործնել գլխա-
վոր: Այս ըմբռնումն է մեր մեկնականը:

Գոյություն ունեցած բազմաթիվ դեպքեր, իրադարձություններ, ներ-
վումներ այս կամ այն պատճառով մոռացություն մատնվելու ու անտեսվե-
լու՝ չեն արտացոլվել մատենագրության մեջ, այն դեպքում, երբ վիմա-
գրությունն ունի շատ արժանազան է դրանք՝ հնարավոր կրկան դառնալով
բազմապիսի մոտեցումների համար: Հետագա աղմուկներից ու ազդակու-
ններից զերծ, սովորաբար փոքրածավալ ու բովանդակությամբ սեղմ հայկա-
կան վիմագրերը ժամանակի դրոշմված արժանաբաններն են: Հասկալիս այս
պարագայով է քննորոշվում նրանց պատմագիտական արժեքը, անտիկարիքներու-
թյունը, արժանահավատությունը:

Պատմական կտրուկ շրջադարձերի հորձանուտում վիմագրագիտական տե-
սանկյունում 9-14-րդ դարերի հայ ժողովրդի քաղաքական պատմությանն ան-
դրադառնալը հնարավորություն է ընձեռում հայտնաբերելու անցյալի ու
ներկայի համանման իրավիճակներ: Զուգահեռների բաղադրամասը հետևու-
թյունների հանգելը պատմագիտության առաջնահերթ պահանջներից է:

Հայկական վիմագրերը մեր պատմության պաշտպանությանն անհուսա-
խախտ պատվարներն են:

Ոչ հեռավոր անցյալում հարևան հանրապետության պատմագիտության
, վերակառուցման հայր՝ Ջիյու Բունի յաթովը, քաղաքական որոշակի նպա-

ասկներ հետապնդելով, Արցախը հայտարարեց ոչ հայկական տարածք, հայերին՝ եկվորներ, իսկ մշակույթն՝ աղվանական: Գոտեպնդված հակահարված շատանալու ակնկալիքով՝ Ֆ.Մամեդովան, Գ.Ախունդովը և ուրիշներ, կնքահոգ զևղծարարությունները հասցրեցին մինչև Այուսիք, Գեղամա երկրի արևելք, Նախիջևան: Միայն այդ տարածքներում պահպանվող հայկական միջնադարյան թագավորի մշակութային կոթողների փորագիր հիշատակությունները հակազիտական, հակապատմական, հակահայկական անհեթեթեությունների ամենախուռու հերքողներն են:

Աշխատանքի նպատակը և խնդիրները: Աշխատանքի նպատակն է ճուշտ ասլ հայկական վիմագրերի՝ որպես 8-14-րդ դարերի Հայաստանի քաղաքական պատմության սկզբնաղբյուրների դերն ու քաջահայտել նրանց նշանակությունը քննարկելով ժամանակաշրջանի համար: Խորագրից տեսաւելի է, որ խննդանալով է հայ ժողովրդի պատմության մի երկարատև ժամանակաշրջանի, խորքում, երոմն տարբեր, սակայն ընդհանրությունների պոկայությունը ամբողջական իրողությունների գոյությունը: Յուրաքանչյուր ժամանակահատված՝ զարգացման օրինաչափություններով ու առանձնահատկություններով, որոնք արտացոլվում են վիմագրերում, առաջարկում է իր խնդիրները: Մոտեցման այս եղանակը մեծապես օժանդակել է խնդիր դնելու՝ ամենուրեք սփռված, ջազմաքանակ արժանագրությունների միջից զտել այն կարևորները, որոնք արժեքավոր սկզբնաղբյուր են հանդիսանում մեր ուսումնասիրության համար: Համախ վիմագրերն իրենք են թելադրում արժանավոր խնդիրները, հատկում նպատակները: Վիմագրական նյութի սակավության, երբեմն քաջակության պատճառով՝ հարավոր չի եղել ըստ ամենայնի լուսաբանել միջնադարյան Հայաստանի սոցիալական հակամարտություններն ընդգրկող հիմնահարցերը:

Աշխատանքի շիտական նորությունները զարգացած ավատաիրություն զարգաշրջանի հայոց քաղաքական պատմությանը վիմագրական հենքով մոտեցումն է: Մեկնարկային այս եղանակը հնարավորություն է ավել կատարել պատմագիտական մշակումներ, թվագրական շակումներ, անել վիմագրագիտական դիտողություններ, լրացնել, միտել կամ հաստատել պատմագրական տեղեկությունները, քաջահայտել նոգ իրողություններ և երեկույթներ, պարզաբանել պատմական օրինաչափությունների ընթացքն ու արամաբանությունը, վերանայել նախկինում ընդունված տեսակետները:

Աշխատանքի աղբյուրագիտական առադր: Աշխատանքն ինրնին աղբյուրագիտական է, խորսկված երկմն փորագիր և գրչագիր հիմքերի վրա: Գե-

րակշիռը գլխավորապես վիմագրական պատվարն է: Մակայն զա չի նշանակում, թե քաջարժանացվել է վիմագրի դերն ընդհանրապես: Անհնար է քննադանել վիմագրությունն ու մոտենագրությունը: Նրանք մի կուռ, միասնական ամբողջություն են աշխատանքի կառուցվածքի հիմքում:

Որպես վիմագրական աղբյուրներ ծառայել են հայ վիմագրագիտության երկրամակրների /Հովհ.Շահխաթունյանցի, Ս.Ջալալյանի, Ս.Գեորգյանցի, Մ.Բարխուդարյանցի և այլոց/ ուրույն վերծանությունները, Գ.Նոստանյանի կազմած «Վիմական տարնգրում», «Գիվան հայ վիմագրության» տատենաշարի ցայծմ հրատարակված վեց պրակներում /կազմողներ՝ Հ.Օրբելի, Ս.Թարխուդարյան, Ս.Ավագյան, Հ.Ջանիփողյան/, Գ.Նաճարյանի՝ Հովհաննավանքին, Անահնին, Հաղբասին նվիրված մեծագրություններում ամփոփված և քննություն ենթակա ժամանակաշրջանն արտացոլող արժանագրությունները, միջնադարյան Հայաստանի հոգևոր կենտրոններից մեկում՝ Վահանավանքում, Գ.Գրիգորյանի դեկավարությունը կատարված երկարամյա հնագիտական պեղումների շնորհիվ հարյուրամյակների խորը շեքերից հառած թագմթիվ վկայագրերը, ի նորո հայտնաբերված վիմագրերը /հրատարակիչներ՝ Ալ.Մանուշարյան, Ս.Սաղումյան, Ա.Այվազյան, Գ.Մարգարյան/, ինչպես նաև անտիպ նյութեր: Օգտագործվել են նաև Հայաստանի վրացերեն արժանագրությունները՝ Թարգմանությունը և հրատարակիչները Գ.Մուրադյանի և արքաական վիմագրերը՝ Ա.Խաչատրյանի աշխատաիրությունը:

8-14-րդ դդ. Հայաստանի քաղաքական պատմության վիմագրական հիմքերը քննելիս՝ մատենագրական նյութեր քաղել ենք Մադուհ Բագրատունու, Հովհաննես Իրախանակերտցու, Թովմա Արծրունու, Ուլասանես Եղիսկոպուի, Ստեփանոս Տարոնացի Ասողկի, Աշխատեհն Լաստիվերտցու, Մովսես Գասխուրանցու, Վիրակու Գանձակեցու, Վարդան Արևելցու, Ստեփանոս Օրբելյանի «Պատմություններից»: Մատթեոս Ուրհայեցու, Մամուել Անեցու, Միխթար Անեցու, Միխթար Այրիվանեցու կազմած ժամանակագրությունները, քացի այն, որ կարևորագույն աղբյուր են քաղաքական դեպքերի վերաբերյալ այլև, երբեմն, պարունակում են այնպիսի եզակի տեղեկություններ, որոնք այլուստ հայտնի չեն: Քաղաքական առանձին վիմագրույց հարցերի ժամանակ անփոխարինելի սկզբնաղբյուր են հանդիսացել Գ.Հովսեփյանի և Հ.Խաչիկյանի կազմած ժողովածուներում ամփոփված ձեռագիր հիշատակարանները և Վ.Հակոբյանի երկատարում գեոեղված փորագրված, տակայն արժեքավոր մանր ժամանակագրությունները:

Ջարգացած ավատաիրություն զնրաշրջանի քաղաքական-հասարակական երևույթների միշտ ընկալման, պատմական զարգացման օրինաչափություն-

ների գնահատման նպատակով՝ ուսումնասիրել ենք հայ դասակարգի ժամանակակից պատմագիտական գրքերը քոլոր հետազոտությունները /Մ. Զամչյան, Ղ. Ալիշան, Մ. Օրմանյան, Ս. Ազոնո, Լեո, Հ. Մանուղյան, Բ. Լուսինյան, Ս. Գոգոյան, Ս. Հակոբյան, Լ. Բարսյան, Բ. Ալուբաբյան, Հ. Բարթիկյան, Ա. Տեր-Դևոնյան, Հ. Աթմազյան, Զ. Հակոբյան, Գ. Գրիգորյան, Բ. Մաթևոսյան և այլք/։ Միջնադարին առնչվող մարտաբանական /Վ. Հարությունյան/ և հնագիտական քնույթի աշխատությունները /Ա. Քալանթարյան, Գ. Կարսիանյան, Ռ. Վարդանյան, Ս. Հարությունյան, Հ. Պետրոսյան/ իրենց առարկայական նյութերով ու եզրահանգումներով, կարևորվում են թեմայի կատարման համար։ Աշխատանքում մեծ տեղ հատկացված անձնանունների ստուգաբանության, բարոյականների ծագումնաբանության շուրջ ավելորդ որոնումներից խուսափել են ավելի Հ. Ամարյանի թագահատորյակները և այլ ընտրանքներ։ Լ. Մելիքյանի և Բեկի երկհատորյակը հանդիսացել է վրաց աղբյուրներին դիմելու հենակետը։ Բնատուրով օգտագործվել է նաև միջնադարյան արքայական աղբյուրների հիման վրա կատարված, անբիցի ժամանակակից հեռագրող Աղիբ Աս-Սեյդի՝ հայագիտության համար անչափ արժեքավոր աշխատությունը։

Նյութի հավաքման և ընդհանրացման մեթոդները։ Վիճագրական նյութը, որը հիմնականում հավաքվել է քաղաքակրթական ժողովածուներից, երբեմն համեմատվել է ընդգրկել հետ՝ դաշտային աշխատանքների ժամանակ։ Այս մեթոդը գործնական նշանակություն է ունեցել նախկին ընթերցումներն ու վերանայությունները Օչգրանյու հարցում։ Հավաքված վիճագրական նյութերի դասակարգման մեջ կիրառվել է ըստ տեղի ու ժամանակի, քնույթի ու նշանակության համարման մեթոդը։ Իրանք այնուհետև պատմա-համեմատական մեթոդի միջոցով ընդհանրացվել են մատենագրությունից, Յեռագիր հիշատակություններից, մանր ժամանակագրություններից բաղկած նյութերի հետ։ Ընդհանրացված վիճագրական, մատենագրական նյութերի վերջնական համակարգումը կատարվել է պատմագիտական վերլուծությունների, տեսակետների, կարծիքների գույքագրմամբ։

Հիմնական վերլուծական սկզբունքները քիտմ են աշխատանքի առաջ քաշված խնդիրները։ Ըստ աղմ, հիմնական սկզբունքներ են հանդիսացել.

ա/ վիճագրություն քաղաքակրթական երկույթների քաղաքային մասնակի կամ ընդհանուրի միջոցով /վիճագրագիտական առանձին կամ համեմատական քննություն/։

բ/ Առանձին վիճագրերի փաստագրական նյութերի պարզաբանումը՝ գուց աղծանագրական կամ մատենագիր աղբյուրների գույքագրմամբ /մատենագրական կամ վիճագրական քննություն/։

գ/ իրադարձությունների զարգացման տրամաբանական իմաստագրումն արձանագրությունների ժամանակագրության միջոցով /վիճակա՝ սկզբնաղբյուրների ժամանակագրական քննություն/։

դ/ Պատմական երկույթների, քաղաքական անցողիկների վերլուծությունները վիճագրական աբորդուլության մեջ՝ մատենագիր տեղեկությունների գույքագրմամբ /մատենագիր մասնական քննություն/։

ե/ Համադրությունների միջոցով քաղաքային իրողությունների իմաստագրումը /պատմագիտական վերլուծություն/։

Կարևորագույն սկզբունքների շարքին կարելի է դասել այն պատմագիտական աղբյուրագրությունները, որոնք կատարվել են վիճագրական վկայությունները ստուգելու, փաստերը պարզաբանելու և առաջ քաշված տեսակետները հիմնավորելու նպատակով։

Աշխատանքի պաշտոնական հավանությունը։ Ներկայացված աշխատությունն առանձին համալսելով և աբորդուլությամբ քննարկվել է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի վիճագրության բաժնում 1995թ. երկրորդ կեսին։ Քննարկումներին մասնակցել են նաև այլ բաժինների ու գրական հաստատությունների մասնակցներ։ Աշխատության մեջ քննարկող կարևորագույն հարցերը գիտական հոդվածների ու հաղորդումների տեսքով սպագրության են հանձնվել աղբյուր հանդեսների, գեկուցումներ են կարգացվել ինստիտուտի սեմինարների և հանրապետական գիտատրոյակների ընթացքում։

Աշխատանքի կարուցվածքը։ Աշխատանքը կազմված է առաջաբանից, երեք գլուխներից և վերջաբանից։ Առաջին գլուխը բաղկացած է հինգ, ծակ մյուս երկուսը՝ երեք էմբլեմներից։ Աշխատանքում զետեղված են գրքագրեր, լուսագրամներ, զծագրված է Պահլավունիների նոր առժամառը, Ջաջարյան բանակների շարժման ուղիները՝ քարտեզով։ Առանձինությամբ վերջում կազմված է օգտագործված աղբյուրների և գրականության ցանկը։

ԱՇ. ԱՏՈՒՆԵՐԻ ՀԻՆՆԱՄԱՆ ԲՈՎԱՆՄԱՆ ԿՈՄՊՅՈՒՅՈՒՄԸ

Ընդածակ առաջաբանում, որտեղ հիմնավորված է թեմայի ցնարկությունը, քննարկված արդյունավետությունը և ձևակերպված աշխատանքի խնդիրներն ու նպատակները, արժեքավորված է հայկական վիճագրերի դերն ու ընդգծված նրանց նշանակությունը ընդհանրապես, սկսած նախադաս հանդիսացող սեպագիր արձանագրություններից՝ հնագույն քաղաք կրթությունների ուսումնասիրությունները այդ եզակի աղբյուրներից, որոնք վերանայություններն ընդգրկում են հնագիտության զարգացմամբ, գիտական միջոց կորոպագով թախանցել դա-

րերի խորքերը՝ նպաստելով համամարդկային աշխարհամանաչողական պատկերը ընդլայնմանը:

Կարևորված է հայկական վիճազների օգտագործման անհրաժեշտությունը է միայն հայազիտության, այլև արաբազիտության, բյուզանդազիտության, թյուրքազիտության, վրացազիտության, իրանազիտության, մոնղոլազիտության համար:

Առաջաքանից եզրափակվում է օգտագործված աղբյուրների և զբաղանությունների անունները:

Պ. Մ. Ա. - Բազմադարյան թագավորության քաղաքական պատմության վիճակագրական հիմքերը: Հայ ժողովրդի պատմության այս կարևորագույն փուլի խնդիրների դիտարկումներն սկսվում են ի հիմանց կատարվող վիճակագրագիտական մշտնջենական, այն է՝ հայոց պետականության վերականգնման հարցով: Ժամանակին Անանի 874 թ. և Գառնիի 879 թ. վիճաբերը Բ. Առաքելյանին հիմք են ապել նկատելու, որ Աշոտ իշխանաց իշխանը հայ նախարարների կողմից թագավոր է ճանաչվել նախքան ավանդորդն ընդունված 885/7 թվականը: Ա. Հակոբյանը մերժում է 869 թ. Կոստանյուկուլսի հուսաց Փոռ պատրիարքի նամակը քննարկելու ու պատասխանելու առթիվ Շիրակավանի հատուկ հրավիրված ժողովում Աշոտին թագավոր ճանաչած լինելու վարկածը, պատճառաբանելով, որ այնտեղ անդրադարձել են զուտ դավանաքանական խնդիրների: Հայաստանի օրինակների կազմակերպած դավադրությունը բացահայտելու և երկրի սահմաններից արագ ուստիկանին դուրս վտարելու քարեհաջող միջադեպին, հավանաբար, գուզադիզել է երկու եկեղեցիների կառուցման ավարտը Անանի կողմից: Բողոքի մարտադրական այս կատույցները, մշակութային արժեքից զատ, ունեցել են նաև քաղաքական համարձակության խորհրդանիշ: Հայտնի է, որ արաբներն իրենց տիրապետության սկզբնական շրջանում քրիստոնյա ժողովուրդներին արգելում էին նոր եկեղեցիներ հիմնարկելը՝ թույլատրելով միայն մասնակի վերանորոգումների անցկացումը հներում: Ժամանակի ընթացքում մոռացության մատնված այս օրենքը, որը հատկապես խստորեն է կիրարկվել Մերձավոր Արևելքում, քերթնախաքար Հայաստանում, երբեմն՝ շրջանցվելով, Բուդայի պատժիչ աշխարհից հետո նորից հիշվել էր: Եվ այն, Աշոտ Բագրատունին այցի է զալիս Անանի կողմից, վանհայր Մաշտոցի համբավից՝ դրդված, ինչպես վկայում է Ստեփանոս Օրբելյանը, սակայն իրականում պետք է ենթադրել, իր դատեր՝ Մյուսայաց Մաշեթի իշխանուհու շանքերով կերտված եկեղեցիների նավակառուցման մասնակցելու: Ինչպես նաև դեպքերում ընդունված է, նրան պետք է ուղեկցելու երկրի աշխարհիկ ու հոգևոր քար-

ուստի ման իշխանավորները: Եվ թեքստ հենց այստեղ էլ նա ճանաչվել է թագավոր՝ զուցեն ոչ հրապարակով օձված, ինչը ենթադրել է ալիս 885/6 թ. խալիֆի ուղարկած թագի ընդունման կապակցությամբ կազմակերպված հանդիսության ժամանակ հայաստանի անվանումն առկայության հարցազնուցումը տարակուսանքն՝ օձուլության ծիսակարգի բացակայության առթիվ: Դա հավանաբար տեղի է ունեցել 874 թ. և երկիցս թգ համատնագրված ձևով իր անուղղակի արտացոլումը գտել . ս. Առաքելից իկեղեցու թմբուկի արևելահայաց կողմում տեղ խնայելու միտումով իր ստ փակագրված վիճակում: Իսկ հանրորեն ընդունված 885/7 թ. պետք է համարել հայոց թագավորության միջազգային ճանաչման տարիթիվը: Նմանօրինակ իրողությունների վկաններն ենք նաև այսօր, երբ կան փաստացի անկախ երկրներ /ԱՂՀ, Արևելագիս և այլն/, որոնց իրավական ճանաչումը դեռևս միջազգայնորեն չի ընդունված:

Անկախության պահպանման համար երկարատև պայքարը Բագրատունի հետագա թագավորներին՝ Մմբատ Ա-ին /890-914/, Աշոտ Բ-ին /914-928/, նաև՝ Աբասին /928-958/, հնարավորություն չափեց հարկին զբաղեցվելու վիճակից աղբյուրներում: Աշոտ Գ Ողորմածից /958-977/ սկսած՝ բագրատունի թագավորները վիճաբերում են Վրացիներին, Վրացիները՝ Աշոտ Բ-ին, Վրացիները՝ Աբասին: Աբի Գազկաշեն եկեղեցու արձանագրության մեջ Աշոտ Գ-ն հանդես է գալիս , Վրացիները՝ հայերեն տարբերակով՝ , Վրացիները՝ Աբասին: Հայտնի է, որ այդ տիտղոսն ստացել է Աշոտ Բ-ն, թայց ինչու, այդ մասին հայ պատմիչները, որոնց վկայակոչում է Ա. Տեր-Ղևոնդյանը, լրում են: Արաբական աղբյուրները տեղեկացնում են, որ , այն շահից հետո, երբ Աշոտ երկվթը, խալիֆի գործերի հետ դաշնակցած, շահից հետո է Արաբական ամիրա Յուսուֆ Եալ-Դեղալի ուժերը, որպես մատուցած ծառայությունների փոխհատուցում, խալիֆի հրամանով ստանում է , շահանշահ՝ տիտղոսը՝: Եթե , շահանշահ՝ արտահայտում էր հայոց արքայի գերազանցությունը Վրաստանի և Հայաստանի թագավորներ հաջակված նահանգապետ-գահերեցների նկատմամբ, ապա , տեղեկությունը՝ պատվանունը՝ Բագրատունիների հզորության ցուցիչն է: Սահանի վանքին լինողական վիճակ տալու արքունական հրովարտվում Մմբատ Բ-ի /977-990/ իրեն , թմբատ Տիեզերական եր Մեծ թագավորին Ազգապետը՝: Գրառակները, պատվար է դարձել՝ խորանալու մատնագրական աղբյուրների մեջ և, ուստ Շապուհ Բագրատունու, Սամուել Անեցու և Մերձար Այրիկանեցու աղբյուրները, որ , տեղեկակար՝ պատվանունի առաջին կրողը եղել է Մմբատ Ա-ն և որ Մմբատ Բ-ին այդ կոչումով առանձնաշելը՝ Օրշոտ չէ: Արձանագրերում Բագ-

բանունի թագուհիների, չԱՅՈՑ եւ ՎՐԱՅ՝ հիշատակութիւնները վերը նշված գերադասութիւն վկայութիւնն է: Արքայազները հանդես էին գալիս «ՔԱՎԱՌՈՐ», իսկ տոհմակից Բագրատունիները՝ «ՏԵՐԱՅՑ ՏԵՐ», «ԻՏԱՆԱՅ ԻՏԱՆ» սխալումներով: Հայկական արձանագրերը հնարախորութիւնն են տալիս կատարելու ոչ միայն պատմագիտական ճշգրտումներ, վիճաբարձրական դիտարկումներ, այլև, ժամանակագրական կարգի քննութեամբ՝ հետեւելու դեպքերի զարգացմանը: 10-րդ դարի 2-րդ կեսի վիճաբերում Հայաստանի զլխավոր իշխանների՝ սպարապետների և մարզապետների պաշտոններում տեսնում ենք Պահլավունիներին: Արդ, քննութիւն կարող է այլ կարևորագույն հանգամանքը, թե ովքե՞ր էին Պահլավունիները և ինչպէս կարողացան հանել այդ բարձր դիրքերին: Մերօրինակ նրանց՝ Կամարավաններից սերելու տեսակետները, որոնք առաջացել են այդ տոհմի ակա՛մավոր ներկայացուցիչների վկայութիւնների սզդեցութեան ներքո և կիսելով՝ նրանց անշահից բարձրացած լինելու կարծիքները, պարզաբանվել է, որ Պահլավունյաց նախահայրը Արուսի 867 թ. վիճաբարձր հիշատակող Վահրամի/Վահամի/ վերակացու որդի Գրիգորն է: Նրանց նախնական տիրույթներն են կազմել ոչ թե Միզ գավառը, կամ նրա արևմտյան մասն, ինչպես ընդունված է կարծել, այլ Արագածոտն գավառի արևմուտքը՝ Մասաբաճի շրջակայքում: 10-րդ դ. սկզբին դավադիր Հասան Գնթուհու շնորհագրիւմից և Վասպուրականի կենտրոնախույս վարքածինց հետո, վարչարարութեան մեջ փորձառու Գրիգորը, հովանաբար, առաջ է քաշվել ու նշանակվել Հայոց մարզպան: Արքայտոհներում հիշատակվող Պահլավունյաց տոհմի նախահայրերի անունների ստուգաբանութիւնը արդել է, որ Արտակ Կամարյանը /զհլ. "Artek"="Arb"= «երկիր», «հող»՝ նոր բառերը Հայկական լեզուի, «ակն» = «փոս», «խոռոչ» /փորել/ = «երկրագործ»՝ Ա.Մ. «Կամար»՝ զհլ. "kamara", հմտ. լատ. "camerara" = «կուսակալ»՝ Յուսափ, Հ.Ամսոյան, «սարապ», «մարզապետ»՝ Անահիտ Երանկացի/ և Արուսիանը /արար. «Արուսի» = «լիզակ», «հիսկի դիմող»՝ Ա.Մ./ ոչ այլ որ հն. քան Գեորգ /հուն. Γεωργιος = «մշակ», «հողագործ»՝ Գրիգոր Սագիս րոս, Հ.Ամսոյան/ և Գոռ /հ. «լիզակ», «լորտիս»՝ Հ.Ամսոյան/ Մարզպետունիները: Արուսիանը - Գոռի նույնութեան հաստատումն է նաև այն պարզան, որ երկուսն էլ գործել են բացառապես միևնույն ժամանակ: Գոռը, գուցե՞ն իրական անվամբ՝ Վահրամ /հմտ. 8-րդ դ. Պարսից արկածասեր արքա Բահրամ-Վահամ-Վրամ Ե, որը Հնդկաստանում և այլուր ցուցաբերած գերբնական ուժի և իրզատութիւնների համար է ստացել Գոռ մականունը/, ինչպես նկատելի է առիթ վարդաւն պատմի մի հի-

շատակութիւնը 1013թ. Բագնայրում արձանագրված Ամբաս Մագիստրոսի մասին, մեզ ավանդել է Արուսիանը ազարածին ծնով: Հայտնի է, որ միջնադարում հայ բարձրագույն զինվածականները միաժամանակ կրել են նաև արաբական անուններ՝ համախ մուսուլման մասնելով հայկականը: Այդ ո՞ր մասնակցին է հիշում արաբերենից «ահեղ» /,արքա» - مام /Սարգանական անուսը, որը մեզ է կապել Մաղադա Մեհասանի 966 թ. վիճաբարձր: Ամփոփելով սվեյցնները, որ այս տոհմը Մարզպետունի է կոչվել Աշոտ Բ-ի, Արսաի գահակալութեան շրջանում՝ ըստ վարած պաշտոնի: Աշոտ Ողորմածի օրոք 962 թ. Գոռ-Արուսիանի վաստակել է սպարապետութիւնը, և տոհմը վերանվանվել է Արուսիանից /անսովոր կնիչքը, եթե էր ծնց Սպարապետունի կոչելին/: Այսպիսով, Հայոց տան մեջ հասնելով երկրորդ դիրքին, ինչպես Լեոն է կոչվել, Իլենց համար սեղեղ են հռչակվոր պարթևական տոհմի Պահլավունի անունը /, «զ/վ/ահլ /ծ/ - աւ /ով - ունի /է/»՝ Գրիգոր Մագիստրոս/: Հնում «հեծյալները» ազատներն էին, այսինքն՝ «սատուաւորները»: Որքան էլ որ միակ աղբյուրը Հովհաննես Գրախանկերտցին յեծարի Գնորգին, միևնույն է հիշատակութիւնում նրա ազնվականական դասը բարձր չէ, ք Վկայակոչված է իբրև «մահ պատուաւորաց» - Ա.Մ./: Այն, ինչպես հայտնի է, աղերսվում է թե առուսավորչին, թե Արշակունիներին: Ի դեպ, պարզվել է, որ 8-րդ դարում Հայասան զաղթած արաբի Պահլավունիները վերանվանվել են Կամարականները ըստ իրենց վարած պաշտոնի, որը կատարվել է այն ցանկից հետո, երբ Հայոց Տրդատ Մեծ արքան /287-330/ նրանց մեծարել է՝ բարձրացնելով միջին «երկրորդ յեծ արքայի», «զլխաւորը և յոյժ պատուական յեծ արքայի»: Վիճաբարձրական դիտարկումները ցույց են տվել, որ Բագրատունյաց թագավորութեան սկզբնական շրջանում, երբ երկրի կենտրոնը Տրապիզոն-Երանկավանն էր, Հայոց մարզպանի կազմածը - նստավայրը հանդիսացել է Արգինան, իսկ 962 թ., երբ մայրաքաղաքն Անի է տեղափոխվել, այն դարձել է Բագնայրը, այսինքն՝ մարզպանի նստոցն՝ անկախ նրա ժառանգական տիրույթներից, մշտապես գտնվել է արքունիքի հարկանութեամբ Անիի, Երանկի, Արագածոտնի վիմագրերը հնարավորութիւնն են ընձեռել նորովի կազմելու Պահլավունյաց տոհմածառը:

Եթե 9-րդ հարյուրամյակի կեսերին կենտրոնական Հայաստանում կատարվում էին զուտ որակական փոփոխութիւններ, երբ պատմութեան թառաքանից անհետացող Մամիկոնյաններին, Կամարականներին, Ամասունիներ-

րին փոխարինում են Բազրատունիները, սպա այլ էր վիճակը ծայրամասերում, որտեղ կատարվում էին այլ կարգի տեղաշարժեր: Վաղեմի նախարարական տները, ոչ միայն ամրապնդում էին իրենց տիրույթների նկատմամբ ժառանգական իրավունքներն, այլև, երբեմն, ընդլայնում ի հաշիվ հարեվանների: Ժամանակին Գեղամա երկիրը «ըննազքսուութեամբ»՝ հռչակվող Սահլ Մեքայայի վերջնական արտազուրումն է նրա թոռան՝ Գրիգոր Արսենյանի, «Սիրոնեմ ին Արոնեմ ին Խոնեմ»՝ հիշատակությունը Մեծ Մասրիկի ՅՅ1 թ. խաչքարում: Գրիգորի և Աղվանից Համամ թագավորի նույնացման հենակետ է ընդունվել ոչ թե Ա. Արհմսկու ու Բ. Ուլուբարյանի ստուգաբանությունը /արք. «համամ» և հուն. «Գրիգորիս» = «արթուր», «զգոն»/, այլ արաբերեն կոշտ «հ» բաղաձայն հնչյունով սկսվող «համամ» / ինչ / բառի նշանակությունը՝ «ազվանի»՝ Մովսես Թախուբեյանի հայանում է, որ «... Գրիգոր շինե զՀաւաթաղացին քերղն և այն կողմ ձգե զձեռն իւր իշխանութեան»։ «Հաւ» / ոչ «Նախի»՝ իմաստով / կամ «հաւք»՝ նշանակում է «թուլուն»՝ ընդհանրապես: Նրա հետևորդները 12-րդ դ. Արցախ - իսպանի արձանագրություններում կրում են Ասկո /արք. «հաւք» / անունը: Համամի հետ նրա նույնացման հաստատումն է նաև Տաթևի 906 թ. վավերագիրը, որտեղ Աղվանքի իշխանների շարքում առաջինը հիշատակվում է Գրիգորը: Նախ՝ պաշտոնական փաստաթղթում նա պետք է հանդես գար իր մկրտության անունով և երկրորդ անհայտը կլիներ Հայոց արքա Մեքայ Ա-ի մոտ անձը թագավոր կոչելը: Տաթևում հայոց թագավորի շուրջ երկրի մեծամեծների հավաքվելը, որը մեր ժողովրդի միաբանության վկայությունն է, չէր կարող վրիպել արաբների ուշադրությունից: Ինչպես ամեն մի կերծանվող կայսրություն, այնպես էլ արաբական իսլամականությունը, ձգտելով իր մեծապետական ազդեցությունը պահպանել նորանկախ երկրներում, թշնամանք էր սերմանում հարևան ազգերի միջև, կամ նույն ժողովրդի ներսում՝ թագուղարկելով ամեն մի նահապետի զահրեց իշխանի: Պատահական չէ, ընդամենը երկու ասրի անց, 908 թ. վավերագրի արաբական հաստատման վկա, Վասպուրականի զահրեց Գաղիկ Արծրունու թագավոր հռչակվելն՝ արաբների հրահրմամբ: Ստեփանոս Օրբելյանը, որքան էլ դատապարտի արաբական գայթակղություններից արքեպսոս նախարարների փոստսիրությունը և դրվածի վասակ իշխանիկի նվիրվածությունը հայոց զահրե, միևնույնն է՝ հեչուսի 886 թ. խաչքարի հիշատակությունը փաստում է, որ Մյունյաց զահրեցը ժամանակին նույնպես թագադիր է եղել: Նահանգային ավատական քաղաքական կազմավորումները, որոնք մատենավիճակային աղբյուրներում կոչվում են թագավորություններ, իսկ գա-

հերցները՝ թագավորներ, հիմնականում ենթարկվում էին Բազրատունի արքայից արքաներին: Վիճազրեում աբաջուլված են ինստիտուցիոնալ-ազգայնական հարաբերությունների հաստատման միջոցով Հայաստանի առաջնակարգ իշխանական տները՝ միայնակ կապելու և կենտրոնիկ միացնելու մեղմ ու մեղմ գործադրելու կոշտ քաղաքականությունը: Վերջին Օսնապարհից հարկապես ակնառու է Բազրատունի ամենագոր թագավորի՝ Գաղիկ Ա-ի /990-1020/ օրոք: Պատմից Մյունյաց Մեքայ Ա թագավորը՝ կորցնելով տիրույթների մի մասը: Ապա՝ Փարիսոսի թագավորները: Տուրի գյուղի «Սարմիր եղջի» եկեղեցու 1000 թ. արձանագրում, արդեն որպես «Արոնեմ թագավոր», հիշատակվում է Գաղիկ Գիգակեցին, որն, ըստ Հովսեփ Կոստանյանի 997 թ. խաչքարագրի «Արոնեմ ին Խոնեմ ին Խոնեմ» էր: Տաշիր-Չորագետի ազգակից Այուրիկյանների «ինքնակալ թագավոր», Գավիթը, գրկվելով տիրույթներից, սկսեց «Անշողին» մականվել:

Ցավոք, հայոց պետության միասնականության համար Գաղիկ Ա-ի գործադրած ջանքերը ոչ միայն չամրապնդվեցին նրա հաջորդների կողմից, այլև նրանց ապաշուրջ քաղաքականության հետևանքը հանդիսացավ Բազրատունյաց թագավորության անկումն ու անկախության կորուստը: Կրթությունը 1038 թ. վրամադիրը հեռավոր ձևով բացահայտում է այն բարոյահոգեբանակ կացությունը, որում հայտնվել էր Հովհաննես-Մեքայ թագավորը՝ 1022 թ. Տրապիզոնում կնքված կործանարար պայմանագրից առաջ: Կարծիք կա, որ այդ պայմանագրի համաձայն է Վեստ Սարգիսը մանաշվել «Արեւելեմ Գրոն», որը վկայված է Տեկոթի 1036 թ. վրամագրում: Դա հաստատում է իսկոնից վանքի ս. Սարգիս եկեղեցու 1038 թ. վրամագրում այդ անձնավորության երեք պատիվների՝ «Անթիմիոս ՊԱՏՐԻԿ, Վեստ եւ Գրոն Արեւելեմ», ստանալու կապակցությամբ հիշատակվող «Գ/Յ/ թագավորն ընդ ինքն» ինքնությունը: Ստանալու կապակցությամբ հիշատակվող «Գ/Յ/ թագավորն ընդ ինքն» ինքնությունը պարզաբանումն ըստ հաջորդական տարեգրությունից՝ վասիլ Բ /976-1025/, Կոստանդին Բ /1025-1028/, Ռամանոս Գ /1028-1034/:

Չնայած Հովհաննես-Մեքայ թագավորի մահից հետո՝ 1042 թ. հայոց զահրե տիրելու Վեստ Սարգիսի փորձերի ձախողմանը, ճերմակազոր սպարապետ Վահրամ Պահլավունու աշակցությամբ Գաղիկ Բ-ի օրինական թագադրմանը և հայրենասեր անեցիների վճռականությունը, հայկական պետականությունն այնուամենայնիվ, կործանումից փրկել չհաջողվեց:

Գ. Ուրու Բ. - Ջաքարյան իշխանապետության վարչաքաղաքական պատմության վրամագրական աղբյուրները: Տրվում են նրկու Օսնապարհով՝ Հայաստանը սելջուկներից ազատագրելու գործում Ջաքարյան եղբայրների մատու-

ցած ռազմական ծառայութեանն և անտրամաշխարհական դրամագլխի շնորհիվ պատմական ապագեզ վերադարձան, նախկին կամ նոր իջած իշխանական տներն տիրույթներն ըստ վիճակն աղբյուրներն: Վաչուցյաններ՝ Արազածոտնի արևելք, Ամբերդ, Միզ, Օրբելյաններ՝ ըստ Սյունիք, Վաչոց ձորի արևելք, Գերդրբունիքի մի մաս, խաղբակյաններ /Պողոջաններ/՝ Վաչոց ձորի արևմուտք, Շահապունիք, Սոսայք, Վարձմունիքի մի մասը, Բուրակ՝ Գեղարքունիքում, Վաչոց ձորում, Վախանգյաններ /Հասան-ձալալյաններ/՝ ըստ խաչեն՝ Հավազուկ, Խոխանաբերդ, Վախանգյան-Սեւոյան՝ Վերին խաչեն՝ Հաթերք, խաչենաբերդ, Հալախաղաց, Գոմյաններ՝ Սողք, Ծար-Վաչկունիք, ապա՝ վերին խաչեն, Արծրունիներ՝ Աղստեխ՝ Սեհրաբերդ, Ասյան, Վահրամյաններ՝ Գազ, Տավուշ, Գարդման, Տերունական, Պահլավունիներ՝ Միրակի մի մաս՝ Մարմաշեն, Բազնայր, Լեբառ, Համազասպան - Սամիկոնյաններ՝ Լոռիի մի մաս՝ Դեղ, Կյուրիկյաններ՝ Արթուր՝ Մածնաբերդ, Նոր-բերդ՝ Նախ՝ մանր իշխանական տներ կամ երկակի վասալներ. Ութանյաններ՝ Ձորագետում, Կուսակներ՝ Աղստու, Հաբրենք՝ Ասյանի շրջակայքում, Շահուսայք՝ Վաչոց ձորի արևելյան մասում՝ Հեղհեղ, Մահանյաններ, Ախթամարյաններ՝ Վաչոց ձորի արևմտյան մասում՝ Կրքուշն, Նորավանք, Գեոսեմյաններ, Դիւնյաններ՝ Արցախի լեռնային և Խաղախանայնի շրջաններում, Շոթոկյանք՝ Սեփակի, Նախ Սյունիքի մի մասում, Գազիի իշխան՝ Խոկոնքում: 14-րդ դ. Արայի լեռան հարավ-արևմուտքում՝ Նոյվորդ կենտրոնով, իշխում էին Ջաքարյանների վասալ Ազիզբեկներ: Մեկրորդ Օսնապարհով իշխանութիւն եկածների թվից ամենաակնառուն Տիգրան Հոնենցն էր՝ Անիում: Այն առավել ակնհայտ է մոնղոլական տիրապետութեան շրջանում. Ավետներ՝ Արազածոտնի արևմուտքի մի մասում, Նախ՝ Երևանում, Ումպլայանները՝ Աղստեխի մի մասում: Բուրց ազատագրված վաչքերը համարվում էին Ջաքարյանների «սեփական ժառանգութիւնը»: Ջաքարների տան ջուրն օրինակներն էին Միրակի մի մասը՝ Անիով, Արազածոտնի արևմուտքը, իսկ հվանեինը՝ Այրարատ նահանգի Կյուսիս-արևելյան մասերը՝ Ավանով, Բջնիով, Գվինով, Լոռիի, Աղստեխ, Գեղարքունիքի մի մասը: Չնայած վրաց թագավորների գերակայութեան ընդունմանը՝ Ջաքարն և ովանն Հայաստանի ազատագրված տարածքներում ստեղծել էին ներքին ինքնավարութեամբ օժտված մի կուռ իշխանապետութիւն՝ ավասական Արևելքին ընդորոշ պետական կառուցվածքով: Հակառակ ընդունված տեսակետների, որովք ընդլսագրվում են իրք արանջած Հայաստանի կառավարումը Ջաքարյանների նրկոն /Գ. Հոյսեփյան/ կամ երեք /Հ. Մանանդյան, Լ.

Բազայան/ Մյուրերի /երրորդը՝ Վահրամյաններ/ միջոցով սեսնելու մեջ, վիճակն աղբյուրների ուշադիր գննութեամբ արդարեւ է, որ այն եւել է միասնական՝ դեկավորումն իրականացված Ջաքարյան տոհմի ավագ ներկայացուցչի կողմից, սկզբում ամիրապատար Ջաքարի ու ովանի, հետո արաբկի, այնուհետեւ Շահնաշահի, ապա Ավագի մասնակցութեամբ Այրիվանի սեփակի վիճակի «, ԲԱԳԱՌՈՐԱԳՆՈՅ՝, Հոռոմոսի 1206, Բջնիի 1209, Բազնայրի և Անիի 1210 թթ. արձանագրութիւնների «, ԵԱՆՏԱՆ՝, Անիի Աղջկաբերդի սնթվագիր, Խոկոնքի 1216 թ. վավերագրի «, ԲԱԳԱՌՈՐ՝, Միրակականի 1228, Բազնայրի 1231 թթ. վավերագրի «, ԲԱԳՈՂՆ՝, Հաղարծնի 1206, Բջնիի 1209 թթ. գորագրութիւնների «, Մեծ՝, «, ԱՇԱՐՀԱՍԱՆ ՏԵՐՈՒՊԻՆ՝, հիշատակութիւնները վկայում են դեպի սեփակութիւն ընթացող Հայաստանի միտումի մասին, որը կասեցվել է վերահաս մոնղոլական տիրապետութեամբ: Պետական կարևորագույն հարցերը՝ բազմական, բազմակի, անսեփական, հասարակական, վարչական, Ֆինանսական, դատական և այլ լիազորութիւններ ունեցող պաշտոնատար անձանց՝ գործակալների մասնակցութեամբ, քննարկվել են արքունական զիվանում: Գլխավոր գործակալը՝ «, ԱԿՐ ՀԵՋԱՍՏ՝, հանդիսացել է Բուրակի, ապա խորաս Արծրունիի Տործակալները՝ Տնչունները /արաբ. حو جوب Էրբամար, ծառայող/ միաժամանակ հանդիսանում էին Ջաքարյանների ավասական տիրույթների վերակացուները՝ լայն իրավասութիւններով: Վիճակն աղբյուրներում պահանջել են հեղուրներ Գրիգոր Խաչենցու, Ջաքարի Պահլավունու, ճուճայի որդի Բեփիկի, Տաշրէի որդի Խավթի, Վահրամի անունները: Հեղուրն երբ կարող էին կոչվել Նախ, ամիր հեղուր, ինչպես Ջաղեղ Սեփակի անթվակիր վիճագրում: Հայաստանի փոխարքային՝ արաբկին, ինամակալին, Կից գործել է քրտուղարութիւն: Աղջոց ս. Ստեփանոս եկեղեցու անիրավական արձանագրութիւնը պահանջ է Սողուն Արծրունու քարտուղարի՝ Պարուտանի անունը: Բազմքանի կառավարումն ավագների խորհրդի միջոցով, իրականացնում էին բազմազգութիւնները՝ ամիրաները /արաբ. مير / իշխան, իշխանավոր/ Վիճակն աղբյուրներում 1220-1230 թթ. Անիի ամիրն է հիշատակվում Երկաթ Պահլավունին: Մայրաքաղաքի հոգևոր առաջնորդները Նուրայան Պահլավունաց տոհմից էին: Գյուրերը դեկավորում էին սանտոները՝ ուսյանները /արաբ. ربيون, պետ/ : Իրավաբանական բնույթի գործառութիւններն իրականացնում էին դատավորները, իսկ հասարակական կարգի պահպանումը՝ շուրք ներք /արաբ. شرفي ոստիկան/ : Արձանագրութիւններում հիշատակվում են նաև ստորին պաշտոնյաների անվանումներ. «, մուհթախը՝ /շուկայի հսկիչ/ «, մուտուր՝ /մթերապետ/ «, գզիր՝ և այլն: Բարձրաստիճան կարևորագույն

պաշտոններից էր ավատական աների միացյալ գործերի սպարապետութունը, ընդ վասակած էր Խաղաղական-Պոռոջան տան ներկայացուցիչներին, հավատարմաց, Սեն ՍԳԱՐՊԻՆՏ՝ Բուրակի մահից հետո: Մշապես ու մեղ կենտրոնական իշխանութուն ունենալու ձգտումը պատճառ է հանդիսացել այն իրողությունից, որ ուզումովարական խիստ կարևորություն ունեցող սահմանմամբ գոտիներում ձաքարյանները ստեղծեցին կողմնակալություններ՝ կողմնապետներ նշանակելով պատերազմական գործողություններում առավել աչքի ընկած գորապետներին:

Քեն արձանագրություններից հայտնի են 4 կողմնակալություններ, քայք պետք է ենթադրել երեքը. ա/ Այրաբատի՝ Վաչուտյաններ, բ/ Արցախի՝ Վախտանգյան-Սակոյան, ապա՝ Հասան-Ջալալյաններ, երբ տոհմը վեր է բարձրացել շահրհիվ Հասան Ջալալ Գոլայի, հետո՝ Գոփյաններ, գ/ Սյունիքի, սկզբում Խաղաղականներ, ապա՝ Օրբելյաններ, երբ տոհմը բարձրացել է Ամբաս Օրբելյանի օրոք: Ստեփանոս Օրբելյանն այս կողմնապետությունը երկանջատում է՝ Վաչոց ձորի և Սյունիքի: Սակայն վիճական աղբյուրների համեմատական քննությունը ցույց է տալիս, որ փաստաբանականը և Տարասյից Օրբելյանը կողմնակալ էին Որշտ ու Որշտ նույն սահմաններում. Ս. ՊԱՆՈՑ ՄԻՆՉԻՆ ԲԱՐՊԻՆՏ՝: Մոսկովները, գրավելով Հայաստանը, գրեթե նույնությունը թողեցին վարչաքաղաքական ներքին կարողվածքը:

13-14-րդ դդ. վիճակները հնարավորություն են ընձեռում կազմելու իշխանության շրջանի հայտնի իշխանապետների՝ ամիրապատարների ու ամրապետների ժամանակագրությունը. 1253-1261 թթ.՝ Ջաքարիս Բ Ջաքարյան, 1261-1284 թթ.՝ Ստորոն Արծրունի, 1284 թ.՝ Մխարգրծել Ջաքարյան, 1284-1287 թթ.՝ Տարասյից Օրբելյան, 1287-1291/3 թթ.՝ Խուբիս-Բուրա Արծրունի, 1291/3-1320 թթ.՝ Շահնշահ Բ Ջաքարյան, 1320-1342 թթ.՝ Վահրամ Ջաքարյան, 1342-1348 թթ.՝ Բուրթել Օրբելյան, 1348-1350-ական թթ.՝ Ջաքա Ջաքարյան, 1350-ական թթ.՝ Շահնշահ Գ Ջաքարյան: Մոսկով տիրակալներն, ըստ էության, Հայաստանում, ինչպես նաև մյուս նվաճված երկրներում, վարում էին երկդիմի քաղաքականություն, որը ընտրովում է մի իշխանական տան հովանավորությունը ու քարձրացմամբ՝ մյուսին հակադրելու բացահայտ միտումով: Այդ քաղաքականությունը՝ գուզորդված ծանր հարկապահանջությամբ, նպաստելու էր շատելու հայոց մեծամեծների միասնականությունը: Չնայած Արդաատականի Մելիք Աշրաֆի ու Հաջի Եկի հրոսակների դեմ հայ ժողովրդի հերոսական պայքարին, որի վկայությունները հեշտուհի 1346 թ. տապանագիրն ու Բշկի 1358 թ. վիճակներն են, անհեռացման եզրին հայտնված Վաչուտյան ու Ջաքարյան իշխանները՝ կենտրոնական Հայաստանում,

նվազած Պոռոջաններն ու Օրբելյանները՝ Սյունիքում, շատված Գոփյաններն ու Հասան-Ջալալյաններն՝ Արցախում, չէին կարող միասնական ժախտ ստեղծել՝ դիմագրավելու թուրքմենական հեռավոր անապատներից եկող, սև և սպիտակ ոչխարապահ՝ քոչվորների արշավանքներին, հայրենիքը գերը պահելու մասնապարհին ամեն ինչ մոխրացնող, Սամարղանդի ուզբեկ տիրակալի անապատություններին:

Գ.ՈՒՅՍ Գ. - Օտարների տիրապետության և հայ ժողովրդի պայքարի արձագանքում: Վիճական աղբյուրներում առկա են արբեր ժամանակներում աշխարհիկները դեպի Հայաստան անընդհատ կատարած արշավանքների արհավիրքներ, ասրական վայրագությունների վկայություններ, հերոսաբար նահատակված զինվորների հիշատակություններ, նվաճողների տիրապետությունը, ծանր հարկերը, հյուծիչ տուրքերը, ազգակիցների դուրծումը թեթևացնելու ուղղությամբ հայ իշխանավորների վավերացրած ապահովության իրավական ակտեր, մեր ժողովրդի դուրսգաղնական պայքարի դրվագներ, հայկական փաստապատճեն գրքերի ու հերով բերդերի, քաղաքների, ամբողջ երկրամասերի ազատագրման ընթացքը և այլ երևույթներ, առանց որոնց, թերև թեր էր լինելու հայոց միջնադարյան պատմությունը: Երկու առանձնակից հազիվ քուրդած քուրդական տիրապետությունն անգամ, աչ է զտել հայկական վիճակագրություններում: Կենտրոնական Հայաստանի կատակա-կառավարիչներ Ահարոն Բուրլաբի և Բագրատ Կիլիկյան մեկական վիճակահարմարում՝ արձանագրված Ասի Մայր տաճարում, ուսուցանարողներին հիմք են տվել նկատելու, որ քուրդական հարձակումներն, անեցիներին կենցաղային քուրդի որոշ զիջումներ անելու գնով, իրականում նպաստելու էին ըստ ամենայնի պահովելու կայսրության անվասնությունը, տեղական միջոցների հաշվին բավարարելու բանակի ու կայսրի կարիքները: Քուրդական մեծամեծները, Հայոց պետականության վերացումով, վարելով մեծապետական, ըստ էության անհեռառես քաղաքականություն, փաստորեն արգելազեղեցին այն պատեջը, որը հուսալիորեն վակում էր արելով հեռավոր անապատներից եկող և դեպի ջուր Քուրդանդիա շարժվող սելջուկ-թուրքական քոչվոր, ուզմառեն ջեղերի մանապարհը: Դա մի կուրք քաղաքականություն էր, որի հետևանքն իր իսկ Քուրդանդիայի կործանման պատճառը հանդիսացավ:

Սելջուկյան տիրապետությունն առավելապես ներկայացվում է Հայաստանի արաբներն և պարսիկներն արձանագրություններին միջոցով, որոնցում արտացոլվում են երկրի կենտրոնական և հարավային բաժան-բաժան արված շրջանները մահմեդական տուրքեր ամիրայությունների միջև: Այստեղ, ըստ հայկական վիճակների, քիչ թե շատ բարձր վիճակում էին Պահլավունիներ-

րի մնացորդները, որոնց սելջուկները գլխավորապես վտահել էին Անիի և շրջակայքի հողեր գործերի կառավարումը: Տաշիր-Ձորագետի հյուսիս-յան թագավորները, հետզհետե նեղվելով թուրքերից, պատսպարվում են Մեծնաբերդում, Տավուշում, ապա՝ Նոր-Բերդում: Նվաճողների դեմ միաբանված պայքարելու պատմական սնհրածեշտությունը պատճառ է դարձել Սյունիք-Արցախի ռազմաքաղաքական դաշինքի ստեղծմանը՝ Բաղաց թագավորների գլխավորությամբ, որոնց մի մասը ծագումով իաչենից էր: Այդ են երևան հանել վահանավանքի վիմագրերը:

1170 թ. Բալաբերդի անկումով և Սյունյաց թագավորության վերացումով՝ պայքարի կենտրոնը տեղափոխվել է Արցախ: Գանձասարի, Հա՛յապտուկի և հասկապես Դաղիվանքում Հասան Կրոնավորյալ Հաթերբեցու 1182 թ. կանգնեցրած իաչքարի հիշատակությունները հուշում են, որ արցախցիները, երկարամյա համար պայքարի շնորհիվ ազատագրվել էին, նախքան հաջարե և Իվանս եղբայրների պատմական առաքելությունը: Վերջիններս մնում էր Իրենց գործերի շուրջը համախմբել Լեոնային կոնիներում թրծված արցախական մարտական շուկաները:

Ամենուր սփռված 13-րդ դ. սկզբների հայկական վիմագրերը՝ մատնագիր աղբուրների զուգորդմամբ, հնարավորություն են ընձեռնել՝ գծագրելու Հայաստանի թուրք-սելջուկներից ազատագրելու Ջաջարյանների բանակների քառորդարյա հաղթարշավի ուղին՝ սկսած Ամբերդով, դաշտային Արցախով, Գեղամա ծովի հարավով, Խազազով, վերստին Ամբերդ-Արագածոտնով, Անի-Շիրակով, Բագարան-Արշարունիքով, Կարս-Վանանդով, Մանգլեքտ, Արմեշ-Վասպուրականով, Նախիջևանով, Մարանդ, Թավրիզ, Արդաբիլ-հյուսիսային Ասորպատականով և վերջացած՝ չորս կողմից շրջապատված Սյունյաց Լեոնաշխարհի ազատագրմամբ: Վիմական աղբուրների համեմատական ըննություները պարզել է, որ գլխավոր գորահրամանատար, աթաբեկ իմանե Ջաջարյանի /ամիրսպասալար Ջաջարեն Նոր էր վախճանվել, 1211-ին: Մահվան վիճահարույց տարեթիվը ճշտված է ըստ Բագարանի ՈԿ (/1211/ թվականի վիմագրի), հյուսիսային Մսկատի գորավար Բուզակի, հարավային ուղղության հրամանատար Լիպարիտ Օրբելյանի փայլուն համաստեղության մեջ, վերջին ակորդի կատարման գործում ամենամեծ ավանդն ունեցնել է արևելյան կողմի գորավան վասակ իաչենցի խաղաղկյանը:

Վերջապահում հսկիրձ նշվում են այն վիմագրերը, որոնք 9-14-րդ դդ. Հայաստանի քաղաքական պատմության ուսումնասիրության համար ունեն բացառիկ աղբուրագիտական արժեք: Ներկայացվում են այն իրողությունները,

որոնք բացահայտվել ու ուղղագծվել են վիմագրերի համեմատական և ժամանակագրական կարգի քննությամբ: Տրվում են ըստ այդմ աղված հետևությունները: Վիմագրագիտությունը զարգացող գիտություն է. ժամանակ առ ժամանակ հայտնաբերվող արժանագրություններն, ապագայում զտնվելիք ընագրերը կզան ժխտելու կամ հաստատելու սրաշ քաշված տեսակետները:

ԱՄՆՆԱՍՈՒՍՈՒԹՅԱՆ ԹՅՄՍԱՅՈՎ ՀՐԱՏԱՐԱԿԱՆ ԵՆ.

1. Ջաջարյանների իշխանապետություն վարչաքաղաքական կառուցվածքի և վիմական աղբուրների /- ՀՀ-ում 1989-1990 թթ. դաշտային հնարավորական աշխատանքների աղբուրներին նվիրված գիտական նասաշրջան /գեկու - Շուրսերի հիմնադրույթներ/, Երևան, 1991:
2. Վիմագրագիտական դիտողություններ, «Տիեզերական» պատվանունի վերագրման շուրջ. - Շիրակի պատմաճշակութային ժողովությունը /գեկուցումների հիմնադրույթներ/, Գյումրի, 1994:
3. Հայկական վիմական արժանագրությունների աղբուրագիտական արժեքը Սյունիք-Արցախ պատմական առնչություններում /ընդունված է ապագրության ԳԱԱ, «Լրաբեր» հանդեսում, 1994/:
4. Բագարանյաց թագավորության հաստատման թվակնի վիմագրագիտական մշտրում /ընդունված է ապագրության ԵՊՀ-ի «Քանբեր» հանդեսում, 1995 /:
5. Պահպանվածների ծագումն ու բարձրացումը /ընդունված է ապագրության ԳԱԱ-ի «Պատմա-բանասիրական» հանդեսում, 1995/:
6. Հայաստանը սելջուկ-թուրքերից ազատագրելու Ջաջարյանների հաղթարշավի ուղին /ընդունված է ապագրության ՀՈԱԿ-ի «Պայքար» ամսագրում, 1995/:
7. Հայոց իշխանապետների ժամանակագրությունն ըստ 13-14-րդ դդ. վիմագրերի /ընդունված է ապագրության ԵՊՀ-ի «Քանբեր» հանդեսում, 1995/:

АРМЯНСКИЕ НАДПИСИ КАК ПЕРВОИСТОЧНИКИ
ПОЛИТИЧЕСКОЙ ИСТОРИИ АРМЕНИИ (IX-XIV вв.)

Р Е З Ю М Е

Армянские ланидарные надписи являются важнейшими первоисточниками политической истории Армении. Работа состоит из предисловия, трех глав и заключения. В результате критического рассмотрения Севастской (874г.) и Таршисской (879г.) ланидарных надписей уточняется дата восстанов-

ления армянской государственности. А в результате изучения Саламанской надписи выявляется, что титулом "Тизеракал" впервые был наречен царь Смбат I Багратуни (890-914) а не Смбат II (977-990). Сделан вывод, что основоположником княжеского дома Пахлавуни был Григор-сын Ваграма, упомянутый в Аручской надписи 867г., а считавшейся предками этой фамилии Артак Камсаракан и Анушавр-есть Георг и Гор Марзпетуни, что подтверждается этимологией указанных имен.

Изучение фактографического материала надписей показывает, что носившие титулы царя царей Багратуни проводили тонкую дипломатию и жесткую политику относительно крупных феодалов, провозгласивших себя царями отдельных краев Армении.

Ерерундская надпись 1038г. отражает морально-психологическое состояние царя Ованнеса-Смбата (1020-1042) накануне заключения армяно-византийского договора 1022г. в Трапезунде. Фактически эта и стала одной из причин падения Багратидского царства.

Во второй главе - "Лашидарные источники административно-политической истории великого княжества Закаринов" - исследованы: предпосылки появления на политической арене новых княжеских фамилий; структура княжества Закаринов. Отвергается версия о том, что оно состояло из трех ветвей. Наоборот, княжество Закаринов являлось душой и независимостью объединенной страной.

В результате хронографического анализа лашидарных надписей XIII-XIVvv. представляется летопись армянских великих князей-амир-спасаларов и атабеков при монгольском ильханате (1256-1344).

В третьей главе исследуются некоторые аспекты исторического характера в годы правления византийцев и сельджуков, выявлен и оценен военно-политический союз между Арнахом и Сюником против иноземных захватчиков. Составлена карта победоносных походов Закаринов.

В диссертации использованы также арабские, персидские и грузинские надписи Армении.

В заключении подчеркивается исключительно важное значение лашидарных надписей в области изучения политической истории Армении в эпоху развитого средневековья.

Handwritten signature

Պատվեր 12

Տպարան 70

Տպագրված է ՀՀ ԳԱՍ գիտական հնթորմն ցիւղի կենտրոնի տպագրության սեղամասում, Կրկան 1, Արուլյան 15: